



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ
CONTENT

ՆԱԽԱԲԱՆ	2
PREAMBLE	2
1. ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱԼ.....	3
1. SUBJECT OF THE SUPPLY AGREEMENT.....	3
2. ՊԱՏԿԻՐՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳ	3
2. ORDERING PROCEDURE	3
3. ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ	5
3. SUPPLY CONDITIONS.....	5
4. ԵՐԱՇԽԻՔՆԵՐ ԵՎ ՓՈԽՅԱՏՈՒՑՈՒՄՆԵՐ	7
4. GUARANTEES AND INDEMNITIES.....	7
5. ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ԸՆԴՈՒՄՈՒՄ	8
5. ACCEPTANCE OF THE GOODS.....	8
6. ԹԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱՅՈՒՄ	9
6. ELIMINATION OF DEFICIENCIES.....	9
7. ԵՐԱՇԽԻՔ	9
7. WARRANTY.....	9
8. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ.....	11
8. PRICE OF THE AGREEMENT AND PAYMENT TERMS.....	11
9. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ.....	12
9. RESPONSIBILITY OF THE PARTIES	12
10. ՉՔԱՅԱՐՅԱՅՎԱԾ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ	13
10. CONFIDENTIAL INFORMATION.....	13
11. ԳԱՂՏՆԻՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ	14
11. PRIVACY AND DATA PROTECTION.....	14
12. ՄՏԱԿՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ	15
12. INTELLECTUAL PROPERTY.....	15
13. ՖՈՐՍ ՄԱԺՈՐ	16
13. FORCE MAJEURE.....	16
14. ԳՈՐԾՈՂ ԻՐԱՎՈՒՆՔՆ ՈՒ ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ԿԱՐԳԸ.....	16



14. GOVERNING LAW AND DISPUTES RESOLUTION.....16

16. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ17

16. OTHER CONDITIONS.....17

ԿԻՑ ՓԱՍՏԱԹՈՒՂԹ № 122

ATTACHMENT № 122

ԿԻՑ ՓԱՍՏԱԹՈՒՂԹ № 223

ATTACHMENT № 223

ԿԻՑ ՓԱՍՏԱԹՈՒՂԹ № 340

ATTACHMENT № 340

ԿԻՑ ՓԱՍՏԱԹՈՒՂԹ № 442

ATTACHMENT № 442

ԿԻՑ ՓԱՍՏԱԹՈՒՂԹ № 543

ATTACHMENT № 543

ՆԱԽԱԲԱՆ	PREAMBLE
----------------	-----------------



<p>Համագործակցության սույն ընդհանուր պայմանները (այսուհետ՝ Պայմաններ) կարգավորում են «ԿՈԿԱ-ԿՈԼԱ ՅԵԼԼԵՆԻԿ ԲՈԹԼԻՆԳ ԶԱՄՓՆԻ ԱՐՄԵՆԻԱ» ՓԲԸ-ի (այսուհետ՝ Գնորդ) և մատակարարների (այսուհետ՝ Մատակարար կամ Մատակարարներ) միջև համագործակցությունը,</p>	<p>These general terms of cooperation (hereinafter referred to as the Terms) govern the rules of the “COCA-COLA HELLENIC BOTTLING BUYER ARMENIA” CJSC's (hereinafter referred to as the Buyer) interaction with suppliers (hereinafter referred to as the Supplier or Suppliers),</p>
<p>հետագայում առանձին հիշատակման ժամանակ այսուհետ՝ Կողմ, կամ ինչպես սահմանված է վերը, համատեղ հիշատակման ժամանակ այսուհետ՝ Կողմեր:</p>	<p>hereinafter separately referred to as the Party, or as defined above, together referred to as the Parties.</p>
<p>Պայմանագրերը (առկայության դեպքում), ներառյալ բոլոր հավելվածները, լրացուցիչ համաձայնագրերը, կից փաստաթղթերը, տեխնիկական բնութագրերը, գծագրերը, նշումները, գնման պատվերը և այլ տեղեկություններ, ինչպես նաև Պայմանները միասին ներկայացնում են Գնորդի և Մատակարարի միջև գործարքի ամբողջ շրջանակը պայմանագրի պայմանների վերաբերյալ, որի առարկան նշված է պատվերում և (կամ) պայմանագրում:</p>	<p>Agreements (if any), including all annexes, additional agreements, attachments, technical specifications, drawings, notes, purchase order and other information, as well as the Terms together represent the full scope of agreements between the Buyer and the Supplier regarding the terms of the agreement, the subject of which is indicated in the order and/or agreement.</p>
<p>Եթե առկա են հակասություններ գրավոր պայմանագրի և/կամ Պայմանների միջև, փաստաթղթերը գերակայում են հետևյալ կարգով.</p> <ol style="list-style-type: none"> 1. գրավոր պայմանագիր 2. Պայմաններ 	<p>If there are disagreements between the terms of the written agreement and/or the Terms, the documents shall prevail in the following order:</p> <ol style="list-style-type: none"> 1. written agreement 2. Terms
<p>1. ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ</p>	<p>1. SUBJECT OF THE SUPPLY AGREEMENT</p>
<p>1.1. Մատակարարման պայմանագրով (այսուհետ՝ Պայմանագիր) Մատակարարը պարտավորվում է Պայմաններով և Պայմանագրով սահմանված կարգով Գնորդին մատակարարել և հանձնել Ապրանքներ, իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել Ապրանքները և վճարել դրանց դիմաց՝ սույն Պայմաններով նախատեսված կարգով և Պայմանագրով սահմանված չափով:</p>	<p>1.1. Under the Supply Agreement the Supplier shall supply and transfer to the Buyer Goods according to the provisions prescribed by the Terms and Agreement, and the Buyer shall accept the Goods and pay for them, in accordance with conditions set forth by the Terms and sizes set forth by the Agreement.</p>
<p>1.2. Պայմանագրով Մատակարարը Ապրանքներ է մատակարարում Գնորդին Կողմերի միջև սույն Պայմաններին համապատասխան և Պայմանների կից փաստաթուղթ 4-ով սահմանված ձևին համապատասխան Կողմերի կողմից երկկողմանի հաստատված Պատվերի հիման վրա:</p>	<p>1.2. Under the Agreement the Supplier shall supply Goods to the Buyer on the basis of the Order specified in the attachment N 4 of this Terms approved by the Parties according to this Terms.</p>
<p>1.3. Պայմանագրի հիման վրա Գնորդը պատվիրում է Ապրանքները իր սեփական կարիքներից ելնելով՝ ըստ անհրաժեշտության՝ համապատասխան Պատվերի հիման վրա: Պայմանագրով Գնորդը պարտավոր չէ Ապրանքները պատվիրել կոնկրետ հաճախականությամբ կամ որոշակի քանակով:</p>	<p>1.3. The Buyer orders Goods based on the Agreement according to its needs, when necessary, based on the relevant Order. Under the Agreement the Buyer is not obliged to order Goods regularly or in certain quantity.</p>
<p>2. ՊԱՏՎԻՐՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳ</p>	<p>2. ORDERING PROCEDURE</p>
<p>2.1. Գնորդը, իր մոտ Ապրանքների պատվիրման անհրաժեշտությունն առաջանալու դեպքում, մինչև Պայմանագրի հիման վրա Ապրանքի պատվիրումը և համապատասխան Պատվերի վերջնականացումը և երկկողմանի հաստատումը, գրավոր կամ էլեկտրոնային եղանակով Մատակարարին է ներկայացնում Նախնական Պատվեր: Պայմանագրի գործողության ամբողջ ընթացքում Գնորդն իրավունք ունի ներկայացնել Ապրանքի մատակարարման Պատվերների ցանկացած քանակություն կից փաստաթուղթ 3-ով (Ծավալային պահանջներ) սահմանված ծավալի պահանջների սահմաններում, իսկ Մատակարարը պարտավոր է</p>	<p>2.1. The Buyer, in case of necessity at the Buyer's side on ordering of the Goods, before ordering and finalization and mutuall approval of the respective Order based on the Agreement, presents to the Supplier Preliminary Order. For the whole term of the Contarct the Buyer is entitled to place any number of Orders for the supply of the Goods at the prices and up to the volume requirements set out in attachment 3 (the Volume Requirements) and the Supplier shall supply such volumes of the Goods at the prices as Buyer has ordered, up to the amount of the Volume Requirement.</p>



<p>մատակարարել Ապրանքներն այն գներով, որով պատվիրել է Գնորդը՝ մինչև Ծավալային պահանջներով սահմանված չափը:</p>	
<p>2.2. Մատակարարը պարտավոր է Նախնական Պատվերն ստանալուց հետո 5 (հինգ) օրացուցային օրվա ընթացքում Գնորդին ներկայացնել Նախնական Պատվերի հիման վրա ձևավորված գնային առաջարկ՝ առնվազն 3 (երեք) տարբերակներով: Գնորդն իրականացնում է Մատակարարի կողմից ներկայացված առաջարկի դիտարկում և, ելնելով Գնորդի անհրաժեշտությունից,</p>	<p>2.2. The Supplier is obliged within 5 (five) calendar days upon receipt of the Preliminary Order provide the Buyer offer formalized based on the Preliminary Order with minimum 3 (three) options. The Buyer conducts the review of the offer and based on the needs of the Buyer,</p>
<p>2.2.1. տեղեկացնում է Մատակարարին առաջարկն այդ պայմաններով Գնորդի համար ընդունելի լինելու մասին, կամ,</p>	<p>2.2.1. informs the Supplier about the acceptability of the offer for the Buyer by the offered conditions, or,</p>
<p>2.2.2. որոշակի փոփոխությունների անհրաժեշտության դեպքում՝ Մատակարարի համաձայնեցմանն է ներկայացնում համապատասխան Առաջարկը՝ Գնորդի մեկնաբանություններով և ուղղումներով:</p>	<p>2.2.2. in case of need of certain modifications presents the offer with the Buyer's comments and adjustments for alignment with the Supplier.</p>
<p>2.3. Առաջարկը Գնորդի կողմից ընդունելի լինելու պարագայում, իրականացնելով Պայմանների 2.2.1. կետով սահմանված գործողությունները, և եթե Գնորդի մոտ պահպանվել է Ապրանքների ձեռքբերման անհրաժեշտությունը, Գնորդը կազմում է համապատասխան Պատվեր և ընթացք տալիս դրա՝ Կողմերի կողմից երկկողմանի հաստատմանը՝ Պայմաններով և Պայմանագրով սահմանված կարգով և պայմաններով:</p>	<p>2.3. In the case of acceptance of the offer by the Buyer by conducting actions of 2.2.1. clause of the Terms and in case the Buyer still intends to buy the Goods, the Buyer prepares respective Order and proceeds with the bilateral approval of it by the Parties according to the terms and conditions of the Terms and Agreement.</p>
<p>2.4. Առաջարկն Գնորդի կողմից ընդունելի չլինելու պարագայում Գնորդն իրականացնում է Պայմանների 2.2.2. կետով սահմանված գործողությունները, իսկ Մատակարարը պարտավոր է իրականացնել Պայմանների 2.2. կետով սահմանված կարգով և ժամկետում արդեն փոփոխված առաջարկների ներկայացումը Գնորդին, մինչև վերջինիս համար ընդունելի առաջարկի ներկայացումը կամ մինչև այն պահը, երբ Գնորդը կտեղեկացնի Մատակարարին, որ այլևս հետաքրքրված չէ տվյալ Նախնական Պատվերի հետ կապված ներկայացվող առաջարկներով:</p>	<p>2.4. In the case if the offer is not accepted by the Buyer, the Buyer executes the actions defined by clause 2.2.2. of the Terms, and the Supplier is obliged to conduct the provision to the Buyer already modified offers in the manner and within the period defined by clause 2.2. of the Terms, until provision of offer that is acceptable for the Buyer or until the moment when the Buyer will inform the Supplier that is no more interested in the offers being presented related to that certain Preliminary Order.</p>
<p>2.5. Գնորդի կողմից Պայմանագրի հիման վրա Նախնական Պատվերի ներկայացումը և դրա հիման վրա Մատակարարի կողմից ներկայացված առաջարկների ուսումնասիրությունն ու քննարկումը ոչ մի դեպքում չի կարող դիտվել որպես Գնորդի կողմից Ապրանքների մատակարարման պատվիրում, օֆերտա կամ ակցեպտ: Սույն Պայմաններով բացառապես Գնորդի կողմից սույն Պայմանների կից փաստաթուղթ 4-ով սահմանված ձևին համապատասխան Կողմերի կողմից երկկողմանի հաստատված Պատվերն է հանդիսանում հիմք Ապրանքների մատակարարման համար:</p>	<p>2.5. Study and discussion by the Buyer of the offers based on the Preliminary Order presented based on the Agreement, in no case shall be considered as ordering, offer or acceptance of the Goods by the Buyer. Under this Terms solely the Buyer's Order bilaterally approved by the Parties in accordance with the template defined in the attachment 4 of this Terms is considered as a basis for Goods delivery.</p>
<p>2.6. Մատակարարը պարտավոր է հաստատել Գնորդի կողմից հաստատված և Մատակարարին ներկայացված Պատվերը՝ այն ստանալու պահից 2 (երկու) աշխատանքային օրվա ընթացքում: Եթե Մատակարարը սահմանված ժամկետում չի հաստատում Պատվերը կամ չի ներկայացնում հիմնավորված դիտողություններ Պատվերում պարունակվող տեղեկատվության վերաբերյալ, ապա Պատվերը համարվում է հաստատված Մատակարարի կողմից, և Մատակարարի</p>	<p>2.6. The Supplier shall inform the Buyer about acceptance of the Order within 2 (two) working days upon receipt of the Order. If the Supplier does not inform the Buyer about acceptance of the Order within the mentioned term or does not present well-grounded observations on the information, contained in the Order, such order shall be considered approved by the Supplier. The Supplier may reject to accept the Order only in the case, if the information, contained in</p>



<p>մոտ առաջանում է Ապրանքների մատակարարման պարտավորություն՝ Պատվերով սահմանված կարգով և պայմաններով: Մատակարարը կարող է հրաժարվել Պատվերն ընդունելուց միայն այն դեպքում, երբ դրանում պարունակվող տեղեկատվությունը հակասում է Պայմաններին, Պայմանագրին կամ կիրառման ենթակա իրավունքի պահանջներին:</p>	<p>the Order, contradicts the Terms, Agreement or provisions of the applicable law.</p>
<p>2.7. Համապատասխան Պատվերով սահմանված Ապրանքները Մատակարարի կողմից Գնորդին մատակարարելիս, Կողմերը, սվյալ Պատվերում փոփոխություններ կատարելու անհրաժեշտության դեպքում, փոխադարձ համաձայնությամբ երկկողմանի հաստատում են Փոփոխված Պատվերը, և Ապրանքների հանձնում – ընդունումը և դրանց դիմաց վճարումն իրականացվում է արդեն ըստ համապատասխան Փոփոխված Պատվերի: Կողմերը փոխադարձաբար ընդունում են, որ Փոփոխված Պատվերը Կողմերի կողմից երկկողմանի հաստատելու պահից, Պատվերը, որը փոփոխվում է սվյալ Փոփոխված Պատվերով, համարվում է ուժը կորցրած:</p>	<p>2.7. If during the supply of the Goods stated by the respective Order there is a need of implementing certain modifications to the Order based on mutual agreement of the Parties, the Parties bilaterally approve the Changed Order, and the delivery and acceptance and the payment for that is performed already in accordance to the Changed Order. Parties agree that from the moment of the bilateral approval of the Changed Order the relevant Order, which is being changed by the Changed Order, shall be deemed invalid.</p>
<p>2.8. Եթե Պայմաններով և Պայմանագրով սահմանված կարգով և պայմաններով Կողմերի միջև փոխհամաձայնեցվում և երկկողմանի հաստատվում է Փոփոխված Պատվեր, ապա համապատասխան Փոփոխված Պատվերը երկկողմանի հաստատելու պահից սկսած Պայմանագրով սահմանված Ապրանքների մատակարարման, գնի, վճարման, ընդունման և ցանկացած այլ պայման, որի համար Պայմանագրով սահմանված է համապատասխան Պատվերը որպես հիմք, ենթակա է կատարման՝ հիմք ընդունելով համապատասխան Փոփոխված Պատվերը:</p>	<p>2.8. If as set forth in the Terms and Agreement, Changed Order will be mutually agreed and bilaterally approved by the Parties, then from the moment of bilateral approval of the respective Changed Order, the terms of supply of the Goods, price, payment, acceptance and any other term, for what the respective Order is defined by the Agreement as basis, is a subject to execution taking as basis relevant Changed Order.</p>
<p>2.9. Գնորդն իրավունք ունի ցանկացած ժամանակ՝ նախքան մատակարարումը չեղյալ հայտարարել ցանկացած Պատվեր/Փոփոխված Պատվեր, անմիջապես ուժի մեջ մտնելով՝ Մատակարարին գրավոր ծանուցմամբ: Մատակարարն իրավունք ունի վճարվելու փաստացի արտադրված Ապրանքների համար, որոնք փաստացի կատարվել են Պատվերի/Փոփոխված Պատվերի պայմաններին համաձայն՝ Պատվերի /Փոփոխված Պատվերի չեղարկման վերաբերյալ ծանուցման օրվա դրությամբ՝ պայմանով, որ այդպիսի ապրանքները փաստացի մատակարարվել են Գնորդի հավանությանը: Մատակարարը իրավունք չունի որևէ այլ պահանջի, ներառյալ բաց թողնված օգուտի կորստի կամ այլ կորուստների կամ վնասների պահանջները:</p>	<p>2.9. The Buyer may at any time before delivery cancel with immediate effect any Order/Changed Order upon written notice to Supplier. Supplier shall be entitled to payment for any Goods actually produced and Services actually performed in accordance with the terms of Order/Changed Order as of the date of Order/Changed Order cancellation notice, provided such Goods and Services are actually delivered to Buyer's satisfaction. Supplier is not entitled to any other claim including claims for loss of anticipated profits, or other losses or damages.</p>
<p>2.10. Սույն Պայմաններով սահմանված կարգով երկկողմանի հաստատված և ստորագրված Պատվերները և Փոփոխված Պատվերները կցվում են Պայմանագրին որպես անբաժանելի մաս:</p>	<p>2.10. The Orders and the Changed Orders bilaterally approved and signed as set forth by this Terms shall be attached to the Agreement as an integral part.</p>
<p>3. ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ</p>	<p>3. SUPPLY CONDITIONS</p>
<p>3.1. Մատակարարը պարտավորվում է մատակարարել սույն Պայմաններին, Պայմանագրին, Պայմանագրի համապատասխան Պատվերով սահմանված բնութագրին ու պահանջներին, կիրառելի իրավունքին ու միջազգային ստանդարտներին, սովորաբար այդպիսի ապրանքին ներկայացվող պահանջներին համապատասխան Ապրանք:</p>	<p>3.1. The Supplier undertakes to deliver Goods, which fully correspond to this Terms, Agreement, to the characteristics and requirements as defined in respective Order of the Agreement, to the applicable law and international standards, to the requirements which are normally presented to such goods.</p>



<p>3.2. Մատակարարը պետք է ապահովի Ապրանքների բնույթին համապատասխան պատշաճ փաթեթավորում՝ դրանք վնասվելուց պաշտպանելու համար, երբ փոխադրվում են տրանսպորտային համապատասխան միջոցներով՝ տրանսպորտային ուղիղ կամ համակցված միջոցներով: Ոչ պատշաճ փաթեթավորման արդյունքում ծագող ցանկացած վնասվածքի ռիսկը կրում է Մատակարարը: Եթե Պայմանագրով այլ բան սահմանված չէ կամ հատուկ մատնանշված չէ Գնորդի կողմից, փաթեթավորումը պետք է միշտ համապատասխանի կիրառելի միջազգային ստանդարտներին, որոնք վերաբերում են ապրանքների նման տեսակների փոխադրմանը: Ապրանքների բնույթին համապատասխան պատշաճ փաթեթավորումը պետք է ապահովվի Մատակարարի կողմից, որպեսզի կանխվի փոխադրման ժամանակ որևէ պոտենցիալ վնասվածք: Ապրանքի հետ կապված ռիսկը Գնորդից անցնում է Մատակարարն՝ համաձայն Incoterms 2010-ի վերաբերելի դրույթների:</p>	<p>3.2. The Supplier shall provide proper packaging to protect them from damage when transported by relevant means of transport, either direct or combined modes of transport. Any damages attributable to improper packing shall be borne by the Supplier. If not otherwise provided in the Agreement or specifically directed by the Buyer, the packaging shall always correspond relevant international standards applicable for transportation of the same type of goods. Proper packaging in accordance with the nature of the Goods shall be provided by the Supplier, in order to prevent any potential damages during transportation. The Risk of the Product is transferred from the Buyer to the Supplier in accordance with the related provisions of Incoterms 2010.</p>
<p>3.3. Սույն Պայմաններով և Պայմանագրով Մատակարարը պարտավորվում է Ապրանքը մատակարարել Գնորդին համապատասխան Պատվերում նշված հասցեում, իսկ դրա բացակայության դեպքում՝ Պայմանագրում նշված Գնորդի գործունեության հասցեում:</p>	<p>3.3. The Supplier is obliged to supply the Goods to the Buyer at the delivery address defined by the relevant Order, or, in case of absence of the latter, by the activity address of the Buyer defined by the Agreement.</p>
<p>3.4. Մատակարարը պարտավորվում է Ապրանքը մատակարարել Գնորդին Կողմերի միջև փոխհամաձայնեցված և համապատասխան Պատվերում նշված ժամկետում, իսկ նման ժամկետի բացակայության դեպքում՝ համապատասխան Պատվերի երկկողմանի հաստատումից հետո՝ 3 (երեք) աշխատանքային օրվա ընթացքում:</p>	<p>3.4. The Supplier is obliged to supply the Goods to the Buyer within the term agreed between the Parties and mentioned in the relevant Order, or, in case of absence of the latter, within 3 (three) working days after bilateral approval of the relevant Order.</p>
<p>3.5. Մատակարարը՝ Ապրանքը Գնորդին հանձնելիս, դրա հետ միաժամանակ Գնորդին պետք է հանձնի նաև դրա պատկանելիքները, ինչպես նաև դրա փաստաթղթերը, եթե այդպիսիք առկա են:</p>	<p>3.5. The Supplier is obliged to hand over the supporting parts/accessories, as well as documents of the Goods, if any, at the same time of handing over the Goods.</p>
<p>3.6. Մատակարարը համաձայնում է անհապաղ տեղեկացնել Գնորդին մատակարարման ցանկացած պատճառով հետաձգման կամ ակնկալվող ուշացման մասին: Մատակարարը լիովին պատասխանատվություն է կրում մատակարարման ուշացման պատճառով պատճառված ցանկացած վնասի համար: Գնորդը պարտավոր չէ ընդունել ցանկացած ուշացած, վաղաժամ մատակարարված Ապրանք կամ մատակարարում առանց համապատասխան մատակարարման փաստաթղթերի:</p>	<p>3.6. Supplier agrees to immediately notify Buyer of any delay or anticipated delay in delivery. Supplier shall be fully liable for any damages due to the delay in delivery. Buyer is not obliged to accept any delayed deliveries, early deliveries or deliveries without appropriate delivery documentation.</p>
<p>3.7. Մատակարարն իրավասու չէ տալ, բանակցել, վաճառել, փոխանցել, թույլատրել կամ այլ եղանակով տնօրինել Պայմաններով և Պայմանագրով սահմանված իր իրավունքներն ու պարտականություններն առանց Գնորդի նախնական գրավոր համաձայնության: Գնորդը կարող է զիջել սույն Պայմաններով և Պայմանագրով սահմանված իր իրավունքները կամ պարտականությունները Գնորդի ցանկացած ուղղակի կամ անուղղակի դուստր կամ կախյալ ընկերության, առանց Մատակարարի նախնական գրավոր համաձայնության:</p>	<p>3.7. The Supplier shall not be entitled to give, bargain, sell, assign, transfer, let or otherwise dispose of any or all of its rights and obligations under the Agreement without the prior written consent of the Buyer. The Buyer may assign its rights or obligations under the Terms and the Agreement to any direct or indirect Buyer's subsidiary or affiliate without the prior written approval of the Supplier.</p>
<p>3.8. Մատակարարը պարտավոր է հետևել սույն</p>	<p>3.8. The Supplier must comply with the provisions of</p>



<p>Պայմաններին կից փաստաթուղթ թիվ 2-ով սահմանված Մատակարարների համար որակի և սննդի անվտանգության, առողջության և անվտանգության և բնապահպանական դրույթներին և անմիջապես տեղեկացնելու Գնորդին բոլոր այն միջադեպերի դեպքում, որոնք կարող են հանգեցնել որակի, սննդամթերքի անվտանգության, առողջության և անվտանգության, բնապահպանական և արտադրանքի/սարքավորումների վնասների:</p>	<p>Quality & Food Safety, Health & Safety and Environmental Clauses for Suppliers set out in attachment № 2 to these Terms and notify Buyer immediately in the event of a near miss incident which could have resulted in any Quality, Food safety, Health and Safety, Environment and products/equipment damages.</p>
<p>3.9. Եթե Մատակարարը արտադրում և վաճառում է բարելավված ապրանքներ, որոնք նման են Գնորդին մատակարարվող Ապրանքին՝ օգտագործելով նոր տեխնոլոգիա, ապա Մատակարարը պարտավոր է այդպիսի ապրանքները մատչելի դարձնել Գնորդին՝ սույն Պայմանագրի համաձայն:</p>	<p>3.9. If the Supplier manufactures and sells improved goods similar to the Goods provided to Buyer by utilizing new technology, the Supplier shall make such products available to Buyer under the Agreement.</p>
<p>3.10. Մատակարարողը համաձայնում է ազատվել ցանկացած Ծավալային պահանջներով սահմանված պարտավորությունից (բացառությամբ ընթացքի մեջ գտնվող աշխատանքների), եթե ի վիճակի չէ ապահովել տարբեր ապրանքների մրցունակ մատակարարում կամ Ապրանքների հետ կապված նոր տեխնոլոգիա:</p>	<p>3.10. The Supplier shall agree to be relieved of any obligation to any volume commitment (except for work in progress) if it is unable to competitively supply the different goods or new technology in relation to the Goods.</p>
<p>4. ԵՐԱՇԽԻՔՆԵՐ ԵՎ ՓՈԽՉԱՏՈՒՑՈՒՄՆԵՐ</p>	<p>4. GUARANTEES AND INDEMNITIES</p>
<p>4.1. Մատակարարը Գնորդին ներկայացնում և երաշխավորում է, որ Պայմանագրի հիման վրա Մատակարարից Գնորդին վաճառված և մատակարարվող Ապրանքները նոր են և կազմված են չօգտագործված մասերից, զերծ են որևէ երրորդ անձանց իրավունքներից և աշխատուժի ու կյուլթերի հետ կապված թերություններից՝ համաձայն որակի և արտադրողականության ստանդարտների, որոնք սահմանված են Պայմանագրի համապատասխան Պատվերներով սահմանված բնութագրերում, չունեն որևէ թերություն, և պետք է ուղեկցվեն բոլոր անհրաժեշտ սերտիֆիկատներով և Փաստաթղթերով:</p>	<p>4.1. The Supplier represents and guarantees to the Buyer that all Goods sold and to be supplied by the Supplier to the Buyer under the Agreement are brand-new and assembled from the brand-new parts, are free from any third party rights and free from defects in workmanship and materials according to the quality and productivity standards stated out in the specifications as set out in Orders of the Agreement, have no Deficiencies, and shall be with all necessary certificates and Documentation.</p>
<p>4.2. Մատակարարը պարտավոր է վերացնել ցանկացած թերություն կամ ոչ պատշաճ կոմպլեկտավորող տարրերից, աշխատուժի կամ կյուլթերի պատճառով առաջացած անհամապատասխանություն, որոնք մաշվածության կամ Ապրանքների ոչ պատշաճ օգտագործման կամ Մատակարարի գրավոր հրահանգին ոչ համապատասխան օգտագործվելու հետևանքով առաջացած թերություններ չեն:</p>	<p>4.2. The Supplier shall remedy any Deficiency or non-conformity resulting from improper component elements, materials or workmanship, other than defects resulting from wear and tear or improper use of the Goods or use of the Goods other than in accordance with the written instructions of the Supplier.</p>
<p>4.3. Երբ վերացվում են Ապրանքի մի մասի և/կամ բաղադրատարրերի թերությունները, Մատակարարը պատասխանատվություն է կրում վերանորոգված կամ փոխարինված Ապրանքի և/կամ դրա բաղադրատարրերի թերությունների համար՝ բնօրինակ Ապրանքների համար կիրառելի նույն կարգով և պայմաններով:</p>	<p>4.3. Where the defects in a part and/or component of the Goods have been remedied, the Supplier shall be liable for defects in the repaired or replaced part and/or component under the same terms and conditions as those applicable to the original Goods.</p>
<p>4.4. Մատակարարը երաշխավորում է Գնորդի կողմից Ապրանքների ստացումը Պայմանագրով չնախատեսված ցանկացած այլ պարտադիր վճարումներից, երրորդ անձանց իրավունքներից և պահանջներից զերծ: Ապրանքների հետ կապված Գնորդին կամ դրա գործընկերներին ուղղված երրորդ անձանց ցանկացած պահանջի դեպքում, որը կապված է նրանց հեղինակային/մտավոր սեփականության իրավունքի խախտման հետ, Մատակարարը պարտավորվում է հատուցել Գնորդին վերջինիս կամ նրա գործընկերների</p>	<p>4.4. The Supplier guarantees to the Buyer reception of the Goods free from any other mandatory payments not stipulated in the Agreement and free against the rights and claims of the third parties. In case of any claims of the third parties to the Buyer or its clients following from infringement of their patent/intellectual property rights connected with the Goods, the Supplier undertakes to compensate to the Buyer all losses and the charges suffered by it or its clients in connection with infringement of such rights, and at</p>



կրած բոլոր կորուստները և ծախսերը կապված նման իրավունքների խախտման հետ, և Մատակարարի միջոցների հաշվին և ռիսկով ապահովել բոլոր առկա պահանջների լուծումը:	own expense and the risk to arrange to settlement of the declared claims.
4.5. Մատակարարը երաշխավորում է, որ Պայմանագրի հիման վրա Գնորդին վաճառված Ապրանքները չեն առաքվի ցանկացած երրորդ անձի՝ առանց Գնորդի գրավոր հաստատման:	4.5. The Supplier guarantees that the Goods, sold to the Buyer under the Agreement will not be delivered to any other party without a written approval of the Buyer.
4.6. Մատակարարը պարտավորվում է ըստ կիրառելիության տրամադրել Գույքին առնչվող ծագման սերտիֆիկատներ, որակի և ապահովության սերտիֆիկատներ: Սերտիֆիկատները կտրամադրվեն Մատակարարի միջոցների հաշվին, եթե այլ բան չի համաձայնեցվել Կողմերի միջև գրավոր կերպով:	4.6. The Supplier undertakes to provide where applicable certificates of origin, quality and safety certificates pertaining to the Goods. The certificates shall be provided at the expense of the Supplier unless otherwise agreed between the Parties in written.
4.7. Մատակարարը պարտավորվում է ամբողջությամբ փոխհատուցել, ապահովելով փոխհատուցումը Գնորդին, բոլոր կորուստները, պահանջները, ծախսերը և պարտավորությունները, որոնք կառաջանան ցանկացած երրորդ անձանց մտավոր սեփականության իրավունքների և հեղինակային իրավունքի կամ կոնֆիդենցիալության ցանկացած խախտման կամ հնարավոր խախտման հետ կապված:	4.7. The Supplier shall fully indemnify and shall keep the Buyer indemnified against all losses, claims/ demands, expenses and liabilities arising out of or in connection with the infringement or alleged infringement of any third party's intellectual property rights and copyright or any breach of confidentiality.
4.8. Մատակարարը երաշխավորում է, որ բոլոր կոդավորումները կիրականացվեն պատշաճ, կկիրառվեն և ենթակա կլինեն սկանավորման կիրառելի ազգային, ռեգիոնալ և տեղական օրենքներին, կանոններին, կարգավորումներին, հրահանգներին, հրամաններին և արդյունաբերական ստանդարտներին համապատասխան:	4.8. The Supplier guarantees that all coding will be properly encoded, applied and capable of being scanned in accordance with all applicable national, regional and local laws, rules, regulations, ordinances and orders and applicable industry standards.
4.9. Մատակարարը պարտավոր է կրել ամբողջական պատասխանատվություն և հատուցել Գնորդին հասցված վնասները, եթե Մատակարարի կողմից խախտվել է կամ չի իրականացվել սույն Պայմանագրով սահմանված երաշխիքի վերաբերյալ դրույթները:	4.9. The Supplier shall bear full responsibility and shall keep the Buyer indemnified against all losses, in case of breach or default of the representations or warranties set forth in this Terms.
4.10. Կողմերն ընդունում են, որ երաշխիքները պահպանվում են Մատակարարի կողմից Ապրանքների ստուգումների, փորձարկումների և ընդունման արդյունքում և Պայմանագրի գործողության դադարեցման և լուծման դեպքում:	4.10. The Parties agree that all warranties will survive any inspection, testing and acceptance of the Goods by the Buyer pursuant and expiration or termination of the Agreement.
5. ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՈՒՄ	5. ACCEPTANCE OF THE GOODS
5.1. Մինչև կոնկրետ Պատվերով սահմանված Ապրանքի ընդունումը Գնորդն իրականացնում է Ապրանքի ստուգում Ապրանքը Գնորդին մատակարարելու օրվանից սկսած 7 (յոթ) աշխատանքային օրվա ընթացքում՝ ստուգելու Ապրանքի համապատասխանությունը սույն Պայմանագրին, Պայմանագրին, Գնորդի պահանջներին և դրանում Թերությունների առկայությունը կամ բացակայությունը, եթե այլ ժամկետ փոխհամաձայնեցված չէ:	5.1. Before acceptance of the Goods, defined by the precise order, the Buyer shall perform their examination within 7 (seven) working days upon delivery date, to check the compliance of the Goods to this Terms, Agreement, Buyer's requirements and for availability or absence of the deficiencies, unless other term is mutually agreed.
5.2. Ապրանքների ընդունումը չի սահմանափակում Գնորդի՝ սույն Պայմանագրի 6-րդ և 7-րդ բաժիններով սահմանված իրավունքները:	5.2. The acceptance of the Goods does not restrict the rights of the Buyer defined by Sections 6 and 7 of these Terms.
5.3. Համապատասխան հարկային հաշիվը հաստատվում է Գնորդի կողմից, եթե Ապրանքը մատակարարվել է պատշաճ և ամբողջությամբ, ներառյալ բոլոր հայտնաբերված անհամապատասխանությունների և/կամ Թերությունների վերացումը:	5.3. Respective invoice shall be approved by the Buyer if the Goods are delivered properly and in full, including elimination of all discovered discrepancies and/or deficiencies.
5.4. Ապրանքի նկատմամբ ռիսկերը Գնորդին են	5.4. The risks regarding Goods are being passed to



<p>փոխանցվում համապատասխան Հանձնման-Ընդունման Ակտը Կողմերի կողմից երկկողմանի հաստատելու պահից:</p>	<p>the Buyer upon bilateral approval of the appropriate Delivery-Acceptance Certificate by the Parties.</p>
<p>6. ԹԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱՑՈՒՄ</p>	<p>6. ELIMINATION OF DEFICIENCIES</p>
<p>6.1. Սույն Պայմանների և Պայմանագրի պայմանների հետ անհամապատասխանություններ և/կամ ցանկացած թերություններ հայտնաբերելու դեպքում Գնորդն իրավասու է պահանջել Մատակարարից կատարել հետևյալ գործողությունները՝</p>	<p>6.1. In case of discovering of any discrepancies with this Terms and terms of this Agreement and/or any deficiency, the Buyer is entitled to require from the Supplier to execute the following actions:</p>
<p>6.1.1. փոխարինել թերությամբ Ապրանքը պատշաճ որակի նոր Ապրանքով՝ նման պահանջ ստանալուց հետո 5 (հինգ) օրացուցային օրվա ընթացքում, կամ</p>	<p>6.1.1. to require replacement of the Goods with Deficiencies with the new Goods with proper quality within 5 (five) calendar days, or</p>
<p>6.1.2. ողջամիտ ժամկետում, բայց ոչ ավելի, քան նման պահանջ ստանալուց հետո 5 (հինգ) օրացուցային օրվա ընթացքում վերացնելու բոլոր անհամապատասխանություններն ու թերությունները:</p>	<p>6.1.2. to require elimination of the discrepancies and/or Deficiencies within 5 (five) calendar days.</p>
<p>6.2. Գնորդն իրավունքի ունի ընդունելու միայն պատշաճ որակի Ապրանքը, եթե մատակարարված Ապրանքի մի մասն է անհամապատասխանություններով և/կամ թերություններով:</p>	<p>6.2. The Buyer is entitled to accept only Goods of proper quality, if supplied Goods are with discrepancies and/or Deficiencies partially.</p>
<p>6.3. Կողմերը փոխադարձաբար ընդունում են, որ սույն Պայմանների 6.1.1. և 6.1.2. ենթակետերում նշված կանոնները գործում են հաջորդաբար. նախ կիրառվում է 6.1.1. ենթակետը, այնուհետև 6.1.2. ենթակետը: Վերոնշյալ կետերի կիրառման այլ հաջորդականություն գործում է միայն Գնորդի ընտրությամբ:</p>	<p>6.3. The Parties mutually agree that the rules defined in the sub-clauses 6.1.1. and 6.1.2. of the Terms shall apply consecutively, firstly applies the sub-clause 6.1.1., then the sub-clause 6.1.2. The other succession of application of the above-mentioned rules shall apply only by the Buyer's choice.</p>
<p>6.4. Կողմերը սույնով փոխադարձաբար ընդունում են, որ Մատակարարը պարտավոր է ստուգել Ապրանքի համապատասխանությունը Պատվերին՝ մինչև տվյալ Ապրանքի հանձնումը Գնորդին:</p>	<p>6.4. The Parties hereby mutually accept, that the Supplier is obliged to inspect compliance of the Goods to the Order before hand-over of that Goods to the Buyer.</p>
<p>6.5. Մատակարարը պարտավոր է Պայմանագրի հիման վրա Գնորդին մատակարարել համապատասխան Պատվերում և/կամ դրան կից փաստաթղթերում սահմանված չափերին և ձևերին խիստ համապատասխան Ապրանք: Մատակարարի մեղքով սույն կետով սահմանված պահանջները չպահպանելու դեպքում Գնորդն իրավունք ունի պահանջելու փոխարինել տվյալ Ապրանքը համապատասխան Ապրանքով կամ Գնորդն իրավունք ունի չընդունելու տվյալ Ապրանքը:</p>	<p>6.5. Based on the Agreement the Supplier is obliged to deliver to the Buyer Goods strictly complying with the sizes and forms defined by the respective Order and/or its' attachments. In case of non-execution of the requirements defined by this clause the Buyer is entitled to require replacement of such Goods with complying Goods or the Buyer is entitled to reject acceptance of such Goods.</p>
<p>6.6. Անհամապատասխանությունների և թերությունների վերացումից հետո Ապրանքի ստուգումը և ընդունումը իրականացվում է նույն կարգով, ինչպես սկզբնական մատակարարման ընդունումը:</p>	<p>6.6. After the elimination of the discrepancies and Deficiencies the examination and acceptance is made in the same way as for the initial delivery.</p>
<p>6.7. Գնորդը, որն Ապրանքներն ընդունելուց հետո դրանցում հայտնաբերել է Պայմանագրից շեղումներ կամ թերություններ, որոնք չէին կարող բացահայտվել ընդունման սովորական եղանակի ժամանակ (թաքնված թերություններ)՝ ներառյալ այնպիսիք, որոնք Մատակարարը դիտավորյալ թաքցրել է, պարտավոր է դրանք հայտնաբերելուց հետո՝ ողջամիտ ժամկետում, այդ մասին հայտնել Մատակարարին:</p>	<p>6.7. In case when the Buyer after receiving of the Goods, finds out in the Goods discrepancies and/or deficiencies from the Agreement, which were not revealed during the usual way of acceptance (hidden deficiencies) including those, which the Supplier intentionally hid, than the Buyer is obliged to notify the Supplier regarding it within reasonable period.</p>
<p>7. ԵՐԱՇՆՈՒՄ</p>	<p>7. WARRANTY</p>
<p>7.1. Մատակարարը երաշխավորում է Գնորդին իր բոլոր պայմանագրային պարտավորությունների կատարումը, ի թիվս այլոց, հետևյալ պարտավորությունների՝ 1/ Ապրանքները պետք է մատակարարվեն</p>	<p>7.1. The Supplier guarantees to the Buyer performance of all of his agreemental obligations inter alia, the following obligations: 1/ the Goods shall be supplied during the delivery</p>



<p>Պատվերներին համապատասխան առաքման ժամկետներում և քանակներով, և 2/ Ապրանքները կմատակարարվեն առանց որևէ թերության, և 3/ Մատակարարն օրինական կերպով իրավասու է կնքել և կատարել Պայմանագիրը և ունի դրա համար անհրաժեշտ բոլոր թույլտվություններն ու փաստաթղթերը, եթե դրանց առկայության պահանջ կա:</p>	<p>period and in quantities according to Orders; and 2/ the Goods shall be supplied free from any defects; and 3/ the Supplier is lawfully authorized to conclude and execute the Agreement and has all permission and documents necessary for it, if requirement on existence of such exist.</p>
<p>7.2. Պայմանագրով մատակարարվող Ապրանքի և դրա բաղկացուցիչ մասի/մասերի համար Երաշխիքային ժամկետ սահմանվում է համապատասխան Պատվերով, որի հաշվարկը սկսվում է Հանձնման-Ընդունման Ակտը ստորագրելու պահից:</p>	<p>7.2. The Warranty Period for the Goods supplied under the Agreement is defined in respective Order, which is calculated upon Delivery - Acceptance Certificate signing.</p>
<p>7.3. Երաշխիքային ժամկետը ներառում է նաև դրա բոլոր երկարացումները, եթե այդպիսիք անհրաժեշտ են սույն Պայմանների և Պայմանագրի համաձայն Ապրանքների թերությամբ մասերի համար: Երաշխիքը վերաբերում է Ապրանքներին, և, եթե վերաբերելի է, դրանց բաղադրամասերին և /կամ կյուլթին:</p>	<p>7.3. The Warranty Period shall include all its extensions if such are required hereunder in respect of defected parts of the Goods according to the Terms and Agreement. The warranty shall cover the Goods and, if applicable, components and/or material of the Goods.</p>
<p>7.4. Եթե Երաշխիքային ժամկետի ընթացքում Գնորդը հայտնաբերում է ցանկացած թերություններ կամ թերացումներ, ներառյալ բայց չսահմանափակվելով Ապրանքների քանակը և որակը, ստանդարտներին անհամապատասխանությունը, Մատակարարը պարտավոր է փոփոխել և վերացնել նման թերությունները կամ թերացումներն իր հաշվին և միջոցներով:</p>	<p>7.4. If during the Warranty Period the Buyer reveals any defects or defaults including but not limited to quantities and qualities of the Goods, non-compliance with the standards, the Supplier shall modify and remove such defects or defaults at its' own costs and expenses.</p>
<p>7.5. Բացառությամբ այն դեպքերի, երբ թերացումը և թերությունը տեղի է ունեցել Գնորդի մեղքով, Երաշխիքային ժամկետի ընթացքում Մատակարարը պարտավոր է՝</p>	<p>7.5. Except the cases, when the shortcoming and defect occurred by the Buyer's fault, within Warranty Period the Supplier is obliged to:</p>
<p>7.5.1. իրականացնել անսարք Ապրանքի կամ դրա բաղկացուցիչ մասի/մասերի փոխարինումը պատշաճ որակի նույն Ապրանքով.</p>	<p>7.5.1. perform repair or replacement of the defective Goods or of any part thereof with the same Goods of proper quality per Buyer's choice;</p>
<p>7.5.2. վերացնել Ապրանքի կամ դրա բաղկացուցիչ մասի/մասերի ցանկացած տեսակի, ձևի, բնույթի թերություն.</p>	<p>7.5.2. eliminate Deficiencies of any kind, nature, form of the Goods or of any part thereof;</p>
<p>7.5.3. իր հաշվին իրականացնել Ապրանքի կամ դրա այն մասի/մասերի փոխարինումը, որը ճանաչվել է թերությամբ Կողմերի կողմից: Կողմերը փոխադարձաբար ընդունում են, որ սույն Պայմանների 7.5.1., 7.5.2. և 7.5.3. ենթակետերում նշված կանոնները գործում են հաջորդաբար. նախ կիրառվում է 7.5.1. ենթակետը, այնուհետև 7.5.2. ենթակետը, այնուհետև 7.5.3. ենթակետը: Վերոնշյալ կետերի կիրառման այլ հաջորդականություն գործում է միայն Գնորդի ընտրությամբ:</p>	<p>7.5.3. perform at its own expenses the repair of the Goods or any part thereof which has been proven to be defective by the Parties. The Parties mutually agree that the rules defined in the sub-clauses 7.5.1., 7.5.2. and 7.5.3. of the Terms shall apply consecutively, firstly applies the sub-clause 7.5.1., then the sub-clause 7.5.2., then the sub-clause 7.5.3. The other succession of application of the above-mentioned rules shall apply only by the Buyer's choice.</p>
<p>7.6. Սույն Պայմանների և Պայմանագրի համաձայն մատակարարվող Ապրանքի Երաշխիքային սպասարկումն իրականացնում է Մատակարարը, եթե այլ բան սահմանված չէ համապատասխան Պատվերում կամ Կողմերի փոխադարձ գրավոր համաձայնությամբ:</p>	<p>7.6. According to this Terms and Agreement the warranty service of the supplied Goods is performed by the Supplier, unless otherwise defined in the respective Order or by mutual written consent of the Parties.</p>
<p>7.7. Թերություն ունեցող Ապրանքի կամ դրա բաղկացուցիչ մասի/մասերի Երաշխիքային ժամկետը երկարաձգվում է այն ժամանակով, որի ընթացքում Ապրանքը կամ դրա բաղկացուցիչ մասը/մասերը չի կարող օգտագործվել դրանում հայտնաբերված թերությունների պատճառով: Փոխարինված Ապրանքի</p>	<p>7.7. The Warranty Period of the Goods with Deficiencies or of any part(s) thereof is prolonged for the period within which the Goods cannot be used due to discovered Deficiencies. The Warranty Period for the replaced Goods or of any part(s) thereof shall be the same as for original Goods calculated as set forth</p>



<p>կամ դրա մասի համար սահմանվում է նույն չափով Երաշխիքային Ժամկետ, ինչ սկզբնական Ապրանքի համար՝ հաշվարկված սույն Պայմաններով և Պայմանագրով սկզբնական Ապրանքի համար սահմանված կարգով:</p>	<p>in this Terms and Agreement for the initial Goods.</p>
<p>7.8. Կողմերը համաձայնության են գալիս այն մասին, որ Թերությունների ուղղումը Երաշխիքային Ժամկետի ընթացքում իրականացվում է առանց Գնորդի կողմից որևէ վճարի՝ Մատակարարի հաշվին:</p>	<p>7.8. The Parties agree that the correction of the Deficiencies within the Warranty Period is carried out at no cost by the Buyer, at the expenses of the Supplier.</p>
<p>7.9. Մատակարարը ազատվում է սույն Պայմաններում և Պայմանագրում նշված Երաշխիքային սպասարկման պարտավորությունից, եթե Ապրանքի Թերությունները առաջացել են Գնորդի կամ նրա կողմից ներգրավված երրորդ կողմի անփութության և/կամ դիտավորության հետևանքով:</p>	<p>7.9. The Supplier is released from responsibility to provide the Buyer the warranty service, defined in this Terms and Agreement, if Deficiencies of the Goods are incurred by negligence or intention of Buyer or third party engaged by the Buyer.</p>
<p>7.10. Երաշխիքային Ժամկետի ընթացքում Թերությունների վերացումը կամ Ապրանքի կամ դրա մասի/մասերի փոխարինումը իրականացվում է ողջամիտ ժամկետում, սակայն ոչ ավել, քան 15 (տասնհինգ) օրացուցային օրվա ընթացքում, եթե Կողմերի միջև այլ բան չի փոխհամաձայնեցվում գրավոր կամ էլեկտրոնային եղանակով:</p>	<p>7.10. The elimination of the Deficiencies or replacement of Good with Deficiencies or any part thereof within Warranty Period is to be done within reasonable timeframe, but not more, that within 15 (fifteen) calendar days, if otherwise isn't agreed between the Parties in written or electronically.</p>
<p>8. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ</p>	<p>8. PRICE OF THE AGREEMENT AND PAYMENT TERMS</p>
<p>8.1. Պայմանագրի ընդհանուր գինը կազմում է տվյալ Պայմանագրի հիման վրա կնքված բոլոր Պատվերներով սահմանված և մատակարարված բոլոր Ապրանքների ընդհանուր գինը:</p>	<p>8.1. Total price of the Agreement makes total amount of prices of the Goods defined by all Orders of that Agreement and supplied.</p>
<p>8.2. Պայմանագրի համապատասխան Պատվերի հիման վրա մատակարարվող Ապրանքների գները սահմանվում են տվյալ Պայմանագրին կից համապատասխան Պատվերում:</p>	<p>8.2. The prices for the Goods defined by the respective Order of the Agreement shall be defined in the respective Order of that Agreement.</p>
<p>8.3. Պայմանագրով Ապրանքի գինը ներառում է բոլոր հարկերը և այլ պարտադիր վճարները:</p>	<p>8.3. Under the Agreement the price of the Goods includes all taxes and other mandatory payments.</p>
<p>8.4. Կողմերի փոխադարձ համաձայնությամբ Պայմանագրի արժույթ է սահմանվում ԶԶ դրամը:</p>	<p>8.4. By mutual agreement of the Parties Armenian Dram is defined as currency of the Agreement.</p>
<p>8.5. Գնորդը պարտավոր է պատշաճ մատակարարված Ապրանքի գինը վճարել Մատակարարին, վերջինիս կողմից ներկայացված հարկային հաշվի հիման վրա, տվյալ հարկային հաշիվը և համապատասխան Ապրանքների Հանձնման-Ընդունման Ակտը երկկողմանի հաստատելուց հետո 60 (վաթսուև) օրվա ընթացքում, որը համապատասխանում է Գնորդի վճարումների օրացույցին, եթե այլ բան սահմանված չէ համապատասխան հավելվածով: Մատակարարը համաձայնում և ընդունում է, որ վերը նշված 60 օրվա վճարման ժամանակահատվածը Մատակարարի կողմից հատուկ դիտարկվել և համաձայնեցվել է և արդար ու ողջամիտ է՝ հաշվի առնելով Գնորդի հետ Մատակարարման պայմանագրի ընդհանուր պայմանները:</p>	<p>8.5. The Buyer shall pay to the Supplier the price of the properly supplied Goods based on the invoice presented by the Supplier, within 60 (sixty) days upon bilateral approval of the current invoice and Delivery – Acceptance Certificate of the respective Goods, which corresponds to the Buyer's payment calendar, if other payment term is not defined by the respective Order. Supplier acknowledges and accepts that the above 60 days' payment period has been specifically considered and agreed by the Supplier and is fair and reasonable taking into account the overall general terms of the supply agreement with the Buyer.</p>
<p>8.6. Եթե համապատասխան Ապրանքների վերաբերյալ Պատվերի առնչությամբ սույն Պայմանների և Պայմանագրի պայմաններին համապատասխան առկա է նաև Փոփոխված Պատվեր, ապա Մատակարարը պարտավոր է տվյալ Ապրանքների համար համապատասխան հարկային հաշիվը ներկայացնել Գնորդին՝ ըստ Փոփոխված Պատվերի պայմանների:</p>	<p>8.6. If for the Goods defined by relevant Order according to the conditions of this Terms and Agreement there exists also the Changed Order, the Supplier is obliged to issue the relevant invoice for that Goods to the Buyer based on the terms of the Changed Order.</p>



<p>8.7. Պայմանագրի հիման վրա Ապրանքի գինը վճարվում է Մատակարարի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Վճարման պարտավորությունը համարվում է կատարված Գնորդի հաշվեհամարից վերը նշված գումարը դուրս գրելու օրվանից:</p>	<p>8.7. The price for the Goods based on the Agreement shall be paid through bank transfer. The payment obligation is considered to be performed from the date of withdrawal of the above-mentioned amount from the bank account of the Buyer.</p>
<p>8.8. Սույնով Մատակարարը տալիս է իր համաձայնությունը Գնորդի գնագոյացման պահանջներին. գների չբարձրացում, ոչ դավադիր համաձայնության հավաստում:</p>	<p>8.8. Hereby the Supplier agrees to the Buyer's pricing requirements: no price increase, certification of non-collusion.</p>
<p>9. ԿՈՐՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ</p>	<p>9. RESPONSIBILITY OF THE PARTIES</p>
<p>9.1. Գնորդն իրավունք ունի Մատակարարի՝ Պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետը խախտելու դեպքում, կետանցի յուրաքանչյուր օրվա համար պահանջել վճարել տույժ՝ մատակարարվող Ապրանքի համապատասխան Պատվերի ընդհանուր գնի 0,03 (զրո ամբողջ երեք հարյուրերորդական) տոկոսի չափով, բայց ոչ ավել, քան մատակարարվող Ապրանքի համապատասխան Պատվերի ընդհանուր գնի 10 (տասը) տոկոսը: Ի հավելումս Գնորդն իրավասու է՝ ա) հրաժարվել ընդունել Մատակարարի կողմից հետագայում մատակարարվող Ապրանքը բ) այլ մատակարարի հանձնարարել Ապրանքների մատակարարման իրականացումը (և պահանջել հատուցել Մատակարարից ցանկացած լրացուցիչ ծախս, որն առաջացել է մատակարարումը Մատակարարի փոխարեն այլ երրորդ կողմի հանձնարարելու հետևանքով) գ) Մատակարարին ենթարկել պատասխանատվության ցանկացած վնասի կամ լրացուցիչ ծախսի համար, և դ) վերադարձնել Գնորդի կողմից Մատակարարին չմատակարարված Ապրանքների համար նախկինում վճարված գումարը:</p>	<p>9.1. For violation of the supply terms defined by the Agreement the Buyer is entitled to require from the Supplier to pay a penalty for delinquency of each day in amount of 0,03 (zero point zero three) percent of the total price of the appropriate Order for the Goods, but not more than 10 (ten) percent of the total price of the respective Order for the Goods.</p> <p>In addition, the Buyer may:</p> <ul style="list-style-type: none"> a) refuse to accept the Goods later supplied by the Supplier; b) assign another supplier to supply the Goods [and reclaim from the Supplier any additional costs incurred as a result of procuring supply from a third Party instead of the Supplier]; c) hold the Supplier accountable for any loss and additional costs incurred; and d) have any sums previously paid by the Buyer to the Supplier for Goods not supplied by the Supplier.
<p>9.2. Մատակարարն իրավունք ունի Գնորդի՝ սույն Պայմանագրով և Պայմանագրով նախատեսված վճարման ժամկետները խախտելու դեպքում, կետանցի յուրաքանչյուր օրվա համար պահանջել վճարել տույժ՝ կետանցված գումարի 0,03 (զրո ամբողջ երեք հարյուրերորդական) տոկոսի չափով, բայց ոչ ավել, քան կետանցված գումարի 10 (տասը) տոկոսը:</p>	<p>9.2. For violation of the payment terms defined by this Terms and Agreement the Supplier is entitled to require from the Buyer to pay a penalty for delinquency of each day in amount of 0,03 (zero point zero three) percent of the overdue amount, but not more than 10 (ten) percent of the overdue amount.</p>
<p>9.3. Գնորդն իրավունք ունի Մատակարարի կողմից Պայմանների կից փաստաթուղթ թիվ 2-ում սահմանված Աշխատանքի անվտանգության, հիգիենայի և բնապահպանական խախտումներ կատարելու դեպքում ծանուցելով Մատակարարին խախտման մասին պահանջել վերացնելու խախտումը/խախտումները Գնորդի կողմից սահմանված ժամկետում: Մատակարարի կողմից խախտումը սահմանված ժամկետում չվերացնելու դեպքում Գնորդն իրավունք ունի Մատակարարից պահանջել վճարել տուգանք կատարած յուրաքանչյուր խախտման համար 10 000 (տասը հազար) ԶԶ դրամի չափով: Մատակարարի կողմից խախտումը կրկին կատարելու դեպքում Գնորդն իրավունք ունի առանց նախապես ծանուցելու Մատակարարից պահանջել վճարել տուգանք յուրաքանչյուր խախտման համար 50 000 (հիսուն հազար) ԶԶ դրամի չափով:</p>	<p>9.3. In case of Occupational Safety, hygiene and environmental violations set out in attachment № 2 to the Terms, Buyer is entitled to notify the Supplier of the violation requesting to eliminate the violation/ violations within the time specified by the Buyer. If the Supplier fails to eliminate the violation within the prescribed period, the Buyer shall have the right to require the Supplier to pay a fine of AMD 10,000 (ten thousand) for each violation. If the violation is committed again by the Supplier, the Buyer is entitled to demand a fine of 50,000 (fifty thousand) AMD for each violation without prior notice.</p>
<p>9.4. Սույն Պայմանագրով սահմանված, ինչպես նաև սույն Պայմանագրի խախտման դեպքում ԶԶ օրենսդրությամբ սահմանված տույժերը և տուգանքները ենթակա են</p>	<p>9.5. The fines and penalties defined herein, as well as defined by the RA legislation for cases of breach of this Terms, are subject to be paid within 5 (five)</p>



<p>վճարման խախտող Կողմի կողմից համապատասխան ծանուցումը ստանալու պահից 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում: Սույն Պայմանագրով սահմանված տույժերի վճարումը չի ազատում Կողմերին Պայմանագրով սահմանված պարտականությունների կատարումից:</p>	<p>working days upon receipt of the relevant notice by the breaching Party. Payment of penalties prescribed by this Terms shall not set the Parties free from the performance of the obligations hereunder.</p>
<p>9.5. Մատակարարն ամբողջությամբ պատասխանատվություն է կրում Պայմանագրի հիման վրա Ապրանքների մատակարարման ընթացքում կամ արդյունքում հասցված ցանկացած վնասի համար և պարտավոր է նշված վնասի հատուցման պահանջը Գևորդից ստանալուց հետո 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում ամբողջությամբ հատուցել այն Գևորդին:</p>	<p>9.5. The Supplier bears full responsibility for the damages caused during or as a result of supply of the Goods based on the Agreement and is obliged to compensate fully the damage to the Buyer within 5 (five) working days after receiving of such request from the Buyer.</p>
<p>9.6. Գևորդը կարող է ցանկացած ժամանակ՝ առանց Մատակարարին գրավոր ծանուցման Մատակարարի ցանկացած պարտավորություն Գևորդի հանդեպ հաշվանցել Մատակարարի հանդեպ Գևորդի ցանկացած պարտավորությամբ, անկախ այն հանգամանքից պարտավորությունն առկա է, թե կարող է առաջանալ ապագայում, լուծված, թե չմարված, անկախ նրանից, թե այս կամ այն պատասխանատվությունը առաջացել է Պայմանագրից, թե՛ ոչ: Սույն կետով սահմանված իրավունքների իրականացումը Գևորդի կողմից չի կարող ազդել կամ սահմանափակել սույն Պայմանագրով կամ այլ եղանակով սահմանված իրավունքները կամ հատուցումները:</p>	<p>9.6. The Buyer may, at any time, without notice to the Supplier, set off any liability of the Supplier to the Buyer against any liability of the Buyer to the Supplier, whether either liability is present or future, liquidated or unliquidated, and whether or not either liability arises under the Agreement. Any exercise by the Buyer of its rights under this clause shall not limit or affect any other rights or remedies available to it under this Agreement or otherwise.</p>
<p>10. ԶԲԱՑԱՅԱՑՎԱԾ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ</p>	<p>10. CONFIDENTIAL INFORMATION</p>
<p>10.1 Պայմանագրով Գևորդի կողմից բացահայտված Գևորդի գործունեությանը վերաբերող ցանկացած տեղեկատվություն, ինչպես նաև նոր լուծումների և տեխնիկական գիտելիքների մասին՝ ներառյալ օրենքով չպաշտպանվող տեղեկատվություն, այսուհետ՝ Զբացահայտված Տեղեկատվություն, հանդիսանում է Գևորդի սեփականությունը և Պայմանագրով այդ տեղեկատվության նկատմամբ որևիցե իրավունք և/կամ լիցենզիա ուղղակիորեն կամ անուղղակիորեն չի փոխանցվում Մատակարարին, նրա աշխատողներին, տնօրեններին, ենթամատակարարներին, մասնաճյուղերին, կախյալ կամ դուստր ընկերություններին:</p>	<p>10.1 Under the Agreement the information related to the activity of the Buyer disclosed by the Buyer as well as solutions and technical knowledge, including information non-defended by law, hereinafter Confidential Information is considered to be the property of the Buyer and under this Agreement disclosure of Confidential Information does not confer any rights and/or license in the Confidential Information either directly or indirectly to the Supplier, its employees, directors, sub-suppliers, branches, dependant or daughter companies.</p>
<p>10.2 Մատակարարը պարտավորվում է չընդօրինակել և (կամ) չպատճենահանել և (կամ) չօգտագործել իրեն տրամադրված Զբացահայտված Տեղեկատվությունը, բացառությամբ Պայմանագրով և/կամ Պայմանագրով նախատեսված նպատակների համար:</p>	<p>10.2 The Supplier undertakes not to imitate and (or) copy and (or) use the disclosed Confidential Information, except for the purposes envisaged hereby this Terms and/ or the Agreement.</p>
<p>10.3 Մատակարարը պարտավորվում է գաղտնի պահել տրամադրված Զբացահայտված Տեղեկատվությունը և ձեռնարկել անհրաժեշտ բոլոր ողջամիտ քայլերը պահպանելու համար այն, այդ թվում՝ բոլոր այն քայլերը, որոնք նա ձեռնարկում է պահպանելու համար սեփական նմանատիպ Զբացահայտված Տեղեկատվությունը:</p>	<p>10.3 The Supplier undertakes to keep the provided Confidential Information in secret and take all necessary actions to protect it, including all those actions that they take to protect their own similar Confidential Information.</p>
<p>10.4 Մատակարարը պատասխանատվություն է կրում իր աշխատողների և տնօրենների, մասնաճյուղերի, կախյալ կամ դուստր ընկերությունների, իր պրոֆեսիոնալ խորհրդատուների, գործակալների համար, որոնք «անհրաժեշտ է, որ տիրապետեն տվյալ տեղեկությանը» Պայմանագրով նախատեսված նպատակների</p>	<p>10.4 The Supplier is responsible for its employees, directors, branches, dependant and daughter companies, professional advisers, agents who have a "need to know" for fulfilment of the purposes defined herein, to who confidential information of the Buyer was disclosed.</p>



<p>իրականացման համար, որոնց բացահայտվել է Գևորգի գաղտնի տեղեկատվությունը:</p>	
<p>10.5. Եթե Մատակարարը պարտավոր է պետական կամ տեղական ինքնակառավարման մարմիններին, դատարաններին կամ իր կանոնադրությամբ սահմանված մարմիններին նրանց պահանջով տրամադրել Զբացահայտված Տեղեկատվությունը, ապա նա պարտավոր է մինչև նման տեղեկությունների տրամադրումը դրա մասին տեղյակ պահել Գևորգին և վերջինիս պահանջով ու հաշվին ողջամիտ ջանքեր գործադրել՝ սահմանափակելու Զբացահայտված Տեղեկատվության տրամադրումը:</p>	<p>10.5. If the Supplier is required to disclose the Confidential Information to state bodies or local self-governmental bodies, courts or to its statutory authorities by their demand, the Supplier shall notify the Buyer before complying with any such requirement, and at the request and expense of the latter, use reasonable efforts to limit such disclosure.</p>
<p>10.6. Պայմանագրով այլ բան նախատեսված չէ, Մատակարարը չի կարող գովազդել կամ հրապարակել այն փաստը, որ Մատակարարը պայմանագիր է կնքել Գևորգի հետ կամ այլ կերպ հարաբերություններ է հաստատել Գևորգի հետ:</p>	<p>10.6. Unless otherwise authorized by the Agreement Supplier shall not advertise or publish the fact that Supplier has contracted with Buyer or otherwise established a relationship with Buyer.</p>
<p>10.7 Պայմանագրի ժամկետի ավարտից հետո կամ Գևորգի պահանջով, Մատակարարը պարտավոր է կյուրական կրիչի վրա Գևորգին վերադարձնել իր տիրապետության տակ գտնվող ամբողջ Զբացահայտված Տեղեկատվությունը և դրանց պատճենները և (կամ) Գևորգի պահանջով ջնջել նշված Զբացահայտված Տեղեկատվությունը բոլոր համակարգչային ֆայլերից և ինֆորմացիոն կրիչ սարքերից:</p>	<p>10.7 Upon expiration of the Agreement or at the request of the Buyer, the Supplier shall return to the Buyer all the Confidential Information and their copies in its possession in a tangible form and at the request of the Buyer shall delete the Confidential Information from all computer files and information media.</p>
<p>10.8 Սույն Պայմաններով սահմանված Զբացահայտված Տեղեկատվության վերաբերյալ պարտականությունները պետք է գործեն նաև Պայմանագրի գործողության դադարեցման և լուծման դեպքում՝ կիրառվող օրենսդրությամբ սահմանված առավելագույն ժամկետով, կամ եթե նման ժամկետն անիրագործելի է, ապա նվազագույնը 5 (հինգ) տարի ժամկետով, սկսած Պայմանագրի դադարեցման պահից, սակայն առանց մինչև այդ պահը Մատակարարի կողմից Պայմանագիրը խախտելու համար սահմանված պատասխանատվության վրա ազդեցություն ունենալու:</p>	<p>10.8 The obligations under this Terms in relation to Confidential Information shall also last indefinitely in the event of expiration or termination of the Agreement to the maximum extent permitted by applicable law or, in case this term is unenforceable, at least for a period of five (5) years from termination of the Agreement, but without affecting the liability of the Supplier for breach of the Agreement before then.</p>
<p>11. ԳԱՂՏՆԻՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ</p>	<p>11. PRIVACY AND DATA PROTECTION</p>
<p>11.1. Սույնով Մատակարարը համաձայնում է երաշխավորել, որ իր աշխատողները, գործակալները և ենթամատակարարները մշտապես համապատասխանեն Եվրոպական միության ընդհանուր տվյալների պաշտպանության 2016/679 կանոնակարգին (GDPR) և այլ կիրառելի օրենքներին և կարգավորումներին, որոնք վերաբերում են անձնական տվյալների պաշտպանությանը՝ կապված սույն Պայմաններով և Պայմանագրով Գևորգից ստացված անձնական տվյալների պաշտպանությանը, և Մատակարարն իրավասու է ստացված անձնական տվյալները մշակել միայն Գևորգի ցուցումների համաձայն:</p>	<p>11.1. Supplier agrees that it shall procure that its employees, agents and sub-suppliers shall, at all times, comply with the European Union Data Protection Regulation 2016/679 (GDPR) and other applicable laws and regulations regarding personal data protection, in relation to personal data received from the Buyer under these Terms and the Agreement and that it shall only process personal data so received in accordance with the instructions of the Buyer.</p>
<p>11.2. Մատակարարը պարտավոր է փոխհատուցել Գևորգին բոլոր ծախսերը, դատական ծախսերը, հայցերը, վնասները, պահանջները և բոլոր այլ ծախսերը, որոնք առաջանում են սույն Պայմանների 11.1. կետի ցանկացած խախտման հետ կապված: Մատակարարը չպետք է անձնական տվյալները փոխանցի երրորդ անձանց՝ առանց Գևորգի նախնական գրավոր</p>	<p>11.2. Supplier shall indemnify the Buyer against all costs, legal costs, claims, damages, demands and all other expenses arising out of any breach of the clause 11.1 of this Terms. Supplier shall not transfer personal data to the third parties without the prior written consent of the Buyer.</p>



համաձայնության:	
12. ՄՏԱՎՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ	12. INTELLECTUAL PROPERTY
<p>12.1. Սույն Պայմանագրում և Պայմանագրում «Մտավոր սեփականության իրավունքները» նշանակում են արտոնագրեր, օգտակար մոդելներ, գյուտի իրավունքներ, հեղինակային իրավունք և հարակից իրավունքներ և վերաբերելի իրավունքներ, ապրանքային և սպասարկման նշաններ, ֆիրմային անվանումներ և դոմենային անուններ, արտաքին տեսքի և ֆիրմային ոճի իրավունքներ, բարի կամքի կամ անբարեխիղճ մրցակցության կանխման իրավունքը, նմուշների, տվյալների բազայի նկատմամբ իրավունքներ, չբացահայտված տեղեկատվության օգտագործման և պաշտպանության (ներառյալ նոու-հաու և առևտրային գաղտնիք), ինչպես նաև մտավոր սեփականության այլ իրավունքներ, յուրաքանչյուր դեպքում, լինի դա գրանցված կամ չգրանցված, ներառյալ բոլոր հայտերը և դիմելու իրավունքները և դրանց տրամադրումը, նորացումը կամ երկարաձգումը, ինչպես նաև նման իրավունքներից և բոլոր նմանատիպ կամ համարժեք իրավունքներից կամ պաշտպանության ձևերից նախապատվություն ստանալու իրավունքը, որոնք գոյություն ունեն կամ գոյություն կունենան այժմ կամ ապագայում աշխարհի ցանկացած մասում:</p>	<p>12.1. In this Terms and the Agreement “Intellectual Property Rights” mean patents, utility models, rights to inventions, copyright and neighbouring and related rights, trademarks and service marks, business names and domain names, rights in get-up and trade dress, goodwill and the right to sue for passing off or unfair competition, rights in designs, database rights, rights to use, and protect the confidentiality of confidential information (including know-how and trade secrets), and all other intellectual property rights, in each case whether registered or unregistered and including all applications and rights to apply for and be granted, renewals or extensions of and rights to claim priority from such rights and all similar or equivalent rights or forms of protection which subsist or will subsist now or in the future in any part of the world.</p>
<p>12.2. Գնորդը պահպանում է մատակարարման հետ կապված Գնորդի կողմից Մատակարարին տրամադրված կամ մշակված ցանկացած փաստաթղթերում, տվյալներում կամ կոլեկցիաներում ներառված մտավոր սեփականության բոլոր իրավունքը: Սույնով Գնորդը Մատակարարին տրամադրում է այդպիսի Մտավոր սեփականության օգտագործման ոչ բացառիկ, անհատույց, չփոխանցվող լիցենզիա այնպիսի տևողությամբ, որը պատշաճ և ողջամտորեն անհրաժեշտ է մատակարարման իրականացման համար:</p>	<p>12.2. Buyer shall retain all Intellectual Property vesting in any documentation, data or materials developed or provided by Buyer to Supplier in connection with the supply. Buyer hereby grants the Supplier a non-exclusive, royalty-free, non-transferable license to use such Intellectual Property for, and for such duration, as is properly and reasonably required in order to execute the supply.</p>
<p>12.3. Մատակարարը հայտարարում և երաշխավորում է, որ Ապրանքի դիզայնը, արտադրությունը և գործառնությունը, ինչպես նաև դրա տրամադրումը, օգտագործումը կամ վաճառքը ոչ մի կերպ չեն խախտի որևէ արտոնագրային, ապրանքանիշի, առևտրային գաղտնիքի, դիզայնի, հեղինակային իրավունք կամ որևէ երրորդ կողմի այլ իրավունքներ: Մատակարարը պարտավորվում է Գնորդին փոխհատուցել Գնորդի դեմ ներկայացված ցանկացած հայցի կապակցությամբ Գնորդի կրած կամ ստանձնած բոլոր պարտավորությունները, ծախսերը, վնասները և կորուստները (ներառյալ, բայց չսահմանափակվելով, ցանկացած ուղղակի, անուղղակի կամ հետևանքային վնասները, բաց թողնված օգուտները, հեղինակության կորուստը և բոլոր տոկոսները, տուգանքները և դատական ծախսերը (հաշվարկված լրիվ փոխհատուցման հիման վրա), ինչպես նաև բոլոր այլ ողջամիտ մասնագիտական ծախսերը)՝ կապված Գնորդի և Նրա լիցենզավորված անձանց և ենթալիցենզառուների կողմից մատակարարման ստացման, օգտագործման կամ հետագա կատարման հետ կապված երրորդ անձանց իրավունքների փաստացի կամ ենթադրյալ խախտման հետ (ներառյալ ցանկացած մտավոր սեփականության իրավունք):</p>	<p>12.3. The Supplier represents and warrants that the design, manufacture and function of the Goods nor its provision, use or sale will in any way infringe upon or violate any patent, trade mark, trade secret, design right, copyright or other rights of any third party. The Supplier shall indemnify Buyer against all liabilities, costs, expenses, damages and losses (including but not limited to any direct, indirect or consequential losses, loss of profit, loss of reputation and all interest, penalties and legal costs (calculated on a full indemnity basis) and all other [reasonable] professional costs and expenses) suffered or incurred by Buyer arising out of or in connection with any claim brought against Buyer for actual or alleged infringement of a third party's rights (including any Intellectual Property Rights) arising out of, or in connection with, the receipt, use or onward execute of the supply by Buyer and its licensees and sub-licensees. This Clause [...] (Intellectual Property) shall survive termination of this Agreement.</p>



13. ՖՈՐՍ ՄԱԺՈՐ	13. FORCE MAJEURE
<p>13.1. Կողմերն ազատվում են Պայմանագրով սահմանված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար պատասխանատվությունից, եթե դա տեղի է ունեցել ֆորս մաժորի ազդեցության պատճառով, որն առաջացել է Պայմանագրի ստորագրումից հետո և որը Կողմերը չէին կարող կանխատեսել և կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են համարվում երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, արտակարգ կամ ռազմական դրության հայտարարումը, քաղաքական հուզումները, հաղորդակցման ուղիների խափանումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում Պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարումը: Մինևսույն ժամանակ Կողմերն ընդունում են, որ Մատակարարը պարտավոր է հնարավորինս շուտ հեռախոսազանգի միջոցով տեղեկացնել Գնորդին հավանական ֆորս մաժորի վերաբերյալ և 24 (քսանչորս) ժամվա ընթացքում գրավոր ծանուցել Գնորդին՝ տրամադրելով մանրամասն նկարագրություն ֆորս մաժորային իրավիճակի բնույթի վերաբերյալ:</p>	<p>13.1. The Parties shall be exonerated from the liability for non-execution or half execution of the obligation envisaged by the Agreement if it is the result of the force majeure influence which has arisen after signing the Agreement and which Parties could not foresee and prevent. The mentioned situations are earthquake, inundation, fire, war, declaration of state of emergency or martial law, political movements, termination of the means of communication work, governmental bodies' acts, etc., which make impossible the execution of the obligations envisaged by the Agreement. At the same time the Parties agree that the Supplier is obliged as soon as reasonably possible to notify the Buyer by telephone of the occurrence of the force majeure event and give the Buyer written notice of the force majeure event within twenty-four (24) hours of the occurrence describing in reasonable detail the nature of the force majeure event.</p>
<p>13.2. Եթե ֆորս մաժորի ազդեցությունը տևում է 3 (երեք) ամսից ավելի, ապա Կողմերից յուրաքանչյուրը կարող է միակողմանի հրաժարվել Պայմանագրից՝ նախապես այդ մասին տեղյակ պահելով մյուս Կողմին:</p>	<p>13.2. If the force-majeure continues more than 3 (three) months each Party is entitled to terminate the Agreement with a prior notice.</p>
<p>13.3. Մատակարարը պարտավոր է գործադրել բոլոր ողջամիտ ջանքերը ֆորս մաժորային իրավիճակի հետևանքները մեղմացնելու և սույն Պայմանագրով, Պայմանագրով սահմանված պարտականություններն իրականացնելու համար՝ տեղաբաշխելով իր առկա արդադրանքն այնպես, որպեսզի ապահովվի Գնորդին պատշաճ, ժամանակին և շարունակական մատակարարումը:</p>	<p>13.3. The Supplier shall use all reasonable efforts to mitigate the effects of the force majeure event and shall use all reasonable endeavours to perform its obligations under this Terms, Agreement, by allocating its available production with a view to maintaining an adequate, timely and continuous supply of Products to the Buyer.</p>
<p>13.4. Այն պարագայում, եթե Մատակարարը չի կիրառում բոլոր ողջամիտ ջանքերը, որպեսզի նվազեցնի ֆորս մաժորային իրավիճակով պայմանավորված ազդեցությունները և չի օգտագործում բոլոր ողջամիտ հնարավորությունները սույն Պայմանագրով և Պայմանագրով սահմանված պարտավորություններն իրականացնելու համար, ապա Մատակարարը չի ազատվում իր պարտավորությունները չկատարելու համար սահմանված պատասխանատվությունից:</p>	<p>13.4. If the Supplier has failed to use all reasonable efforts to mitigate the effects of the Force Majeure Event and did not use all reasonable endeavors to perform its obligations under this Terms and the Agreement than the Supplier is not relieved from its liability arising out of the suspended performance of its obligations.</p>
<p>14. ԳՈՐԾՈՂ ԻՐԱՎՈՒՆԵՔՆ ՈՒ ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ԿԱՐԳԸ</p>	<p>14. GOVERNING LAW AND DISPUTES RESOLUTION</p>
<p>14.1. Պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը:</p>	<p>14.1. The Agreement shall be governed by the legislation of the Republic of Armenia.</p>
<p>14.2. Պայմանագրից բխող կամ դրա կապակցությամբ առաջացած ցանկացած վեճ պետք է կարգավորվի Կողմերի միջև բանակցությունների միջոցով:</p>	<p>14.2. All disputes arising out or in connection with the Agreement shall be settled by means of negotiations between the Parties.</p>
<p>14.3. Այն դեպքում, եթե Կողմերը ի վիճակի չեն բանակցությունների միջոցով կարգավորել առաջացած վեճերը, ապա նման վեճերը կկարգավորվեն ԶԶ համապատասխան դատական մարմինների կողմից:</p>	<p>14.3. In case the Parties are not capable to settle a dispute by negotiations, the dispute shall be settled by the relevant courts of the RA.</p>
<p>15. ԱՊԱՐՈՎԱԳՐՈՒԹՅՈՒՆ</p>	<p>15. INSURANCE</p>
<p>15.1. Մատակարարը պարտավոր է իր հաշվին իրականացնել սույն Պայմանագրով և Պայմանագրով սահմանված պարտականությունների իրականացման հետ կապված բոլոր ռիսկերի ապահովագրություն</p>	<p>15.1. The Supplier shall maintain at its own expense an insurance coverage in a recognized, good standing and reputable insurance company covering all risks related to the performance of this Terms and</p>



<p>(Ներառյալ, բայց չսահմանափակվելով՝ մասնագիտական հատուցում, քաղաքացիական և ապրանքի պատասխանատվության ապահովագրություն, ներառյալ, բայց չսահմանափակվելով՝ շուկայից ապրանքի հետ կանչ) նվազագույնը Պայմանագրով սահմանված ապրանքների ընդհանուր արժեքի գումարի չափ՝ յուրաքանչյուր դեպքի համար և դրանց ընդհանուր գումարի չափով՝ տարեկան, ծանաչված, բարի համբավով և հեղինակավոր ապահովագրական ընկերությունում, եթե այլ բան սահմանված չէ Կողմերի կողմից յուրաքանչյուր համապատասխան հավելվածում: Մատակարարը պարտավորվում է Գևորգին Ներկայացնել ապահովագրությունը հավաստիացնող փաստաթուղթ (հավաստագիր) գործունեության ժամկետից 30 (երեսուն) օրվա ընթացքում: Մատակարարը իրավասու չէ իրականացնել ցանկացած լուծում, դադարեցում, ոչ երկարացում կամ այլ նյութական փոփոխություն ապահովագրական փաթեթում, առանց դրա վերաբերյալ Գևորգին նախնական (30 (երեսուն) օր) գրավոր ծանուցման:</p>	<p>the Agreement, (including without limitation, professional indemnity, public and products liability insurance, including without limitation for product recall from the market) in the amount of at least total price of the goods/products being defined by the Agreement per each and every occurrence and total aggregated amount of such - annually if other otherwise is not agreed by the Parties in each respective appendix hereto. The Supplier shall provide the Buyer with a certificate of insurance evidencing such insurance within thirty (30) days of the Effective Date. The Supplier shall not voluntarily permit any cancellation, termination, non-renewal or material change in said insurance coverage during the Term without thirty (30) days' prior written notice to the Buyer.</p>
<p>15.2. Կողմերն ընդունում են, որ սույն Պայմանների 15.1. կետը չի սահմանափակում Մատակարարի հավանական պատասխանատվությունը Գևորգի հանդեպ սույն Պայմաններով, Պայմանագրով սահմանված պարտականությունների իրականացման համար և ապահովագրության վերաբերյալ ապացույցների ձեռք բերման ձախողումը ոչ մի դեպքում չի կարող մեկնաբանվել որպես Մատակարարի կողմից նշված ապահովագրական փաթեթի ներկայացում:</p>	<p>15.2. The provision of clause 15.1. of this Agreement does not constitute any limitation of the Supplier's potential liability to the Buyer for failure of its obligations under this Agreement and failure to request evidence of this insurance will in no way be construed as a waiver of Supplier's obligation to provide the insurance coverage specified.</p>
<p>16. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ</p>	<p>16. OTHER CONDITIONS</p>
<p>16.1. Մատակարարը սույնով ներկայացնում և երաշխավորում է, որ</p>	<p>16.1. The Supplier hereby represents and warrants that:</p>
<p>ա/ միշտ ամբողջությամբ կգործի սույն Պայմանների և Պայմանագրի հիման վրա, ինչպես նաև վերջիններիս հիման վրա իրականացվող գործողությունները կարգավորող կիրառելի օրենսդրությանը և կարգավորումներին համապատասխան, բ/ ծանոթացել է Գևորգի Գործարար Վարքագծի Կոդեքսին, Կաշառակերության դեմ քաղաքականությանը և Մատակարարների Ուղեցույց Սկզբունքներին, ամբողջությամբ ընդունում է դրանք և պարտավորվում է գործել դրանց համապատասխան: Գործարար Վարքագծի Կոդեքսին, Կաշառակերության դեմ քաղաքականությանը և Մատակարարների Ուղեցույց Սկզբունքներին հղումը՝ https://am.coca-colahellenic.com/hy/about-us/_0 գ/ առկա են համապատասխան ընթացակարգեր, որոնք ուղղված են Մատակարարի համար աշխատող կամ նրա կողմից ներգրավված որևէ անձի կամ որևէ այլ երրորդ կողմի՝ սույն Պայմանների և Պայմանագրի հետ կապված որևէ գործունեության մասնակցության կանխարգելմանը, փորձը կամ վարքագիծը, որը կարող է խախտել Գևորգի քաղաքականությունները կամ կաշառակերության կամ կոռուպցիայի դեմ որևէ օրենք, կարգավորումներ և օրենսգրքեր՝ Կիրառելի օրենսդրության համաձայն, դ/ ցուցադրել Գևորգի քաղաքականություններին համապատասխանությունը Գևորգի պահանջի և հավանության առկայության դեպքում,</p>	<p>a) shall fully comply at all times with all conditions defined by this Terms and Agreement, as well as with applicable legislation and regulations governing its activities performed under this Terms and the Agreement; b) shall be acknowledged with the Code of Business Conduct, Anti-Bribery policy and Supplier Guiding Principles of the Buyer, fully accepts them and undertakes to act in compliance with them. Reference to the Code of Business Conduct, Anti-Bribery policy and Supplier Guiding Principles: https://am.coca-colahellenic.com/hy/about-us/_0 c) shall have in place adequate procedures designed to prevent any person working for or engaged by the Supplier or any other third party in any way connected to this Terms and the Agreement, from engaging in any activity, practice or conduct which would infringe the Buyer's policies or any anti-bribery and anti-corruption laws, regulations and codes under Applicable Laws; d) must be able to demonstrate compliance with the Buyer's policies at the request and satisfaction of the Buyer;</p>



<p>ե/ գները սահմանել է առանց դավադիր համաձայնության Մատակարարի և որևէ այլ Գևորդի, որը մրցակցում է նման արտադրանքի վաճառքով, կամ որևէ երրորդ կողմի, որը կապ չունի Մատակարարի և Հաճախորդի միջև գործարքի հետ,</p> <p>զ/ ապահովել մատակարարման վերաբերյալ արձանագրությունների պատշաճ պահպանումը նվազագույնը 5 (հինգ) տարի ժամկետով: Մատակարարը պարտավոր է հասանելի դարձնել նշված արձանագրությունները Գևորդի, վերջինիս ներկայացուցիչների և մասնագիտացված խորհրդատուների համար նշված ժամանակահատվածի ընթացքում ցանկացած պահի՝ ըստ պահանջի: Գևորդն իրավասու է անհրաժեշտության դեպքում վերցնել նշված արձանագրությունների օրինակը կամ ոչնչացնել նշված օրինակները:</p>	<p>e) it has established prices without collusion between Supplier and any other entity competing in the sale of such products or any third party unrelated to the transaction between Supplier and Buyer;</p> <p>f) ensure that proper records are kept relating to the performance of the supply minimum for the period of 5 (five) years. The Supplier shall make such documentation available for examination by the Buyer and its representatives and professional advisers at any time during such period on request. The Buyer preserves the right to take copies of any records which it reasonably requires or remove such copies.</p>
<p>16.2. Սույն Պայմանների 16.1.կետի «ա/»-ից «դ/» ենթակետերից որևիցե մեկի խախտումը իրավունք է վերապահում Գևորդին անմիջապես, գրավոր ծանուցմամբ, լուծել Պայմանագիրը:</p>	<p>16.2. Breach of one of the subclauses from “a)” to “d)” of the clause 16.1 of this Terms shall entitle the Buyer to terminate the Agreement by written notice with immediate effect.</p>
<p>16.3. Մատակարարն ընդունում է, որ սույն Պայմաններով և Պայմանագրով սահմանված ցանկացած իրավունք հանդիսանում է լրացում և ոչ մի դեպքում չի սահմանափակում կիրառելի օրենսդրությամբ սահմանված իրավունքները և հատուցումները: Միևնույն ժամանակ Մատակարարը չի կարող փոխանցել Պայմանագրից բխող իր իրավունքները և պարտականությունները (ներառյալ՝ փոխանցել պարտքը) ցանկացած այլ անձի՝ առանց Գևորդի գրավոր համաձայնության:</p>	<p>16.3. The Supplier shall agree that any rights granted under this Terms and the Agreement are in addition to and not exclusive of any rights or remedies provided by applicable laws. At the same time the Supplier cannot transfer rights and responsibilities raising from Agreement (including debt transfer) to any other party – without written agreement of the Buyer</p>
<p>16.4. Կողմերն ընդունում են, որ Մատակարարի մայր կազմակերպությունը համապարտ և լիակատար պատասխանատվություն է կրում Մատակարարի բոլոր դուստր կազմակերպությունների հետ:</p>	<p>16.4. The Parties agree that the parent entity of the Supplier shall undertake joint and several liabilities with all Supplier affiliates</p>
<p>16.5. Ցանկացած ժամանակ, Գևորդի անուկից Մատակարարին նախնական ծանուցմամբ կամ առանց ծանուցման, Գևորդը և/կամ իր ներկայացուցիչները, խորհրդատուները, աշխատողները կամ դուստր ընկերությունները, որոնք պատկանում են Կոկա-Կոլա Հելենիկ Ընկերությունների խմբին իրավասու են իրականացնել ստուգում, որպեսզի ստուգեն Մատակարարի համապատասխանությունը սույն Պայմաններին, Պայմանագրին, Գևորդի քաղաքականություններին և ընթացակարգերին: Նման ստուգման գործողությունների ընթացքում Մատակարարը պետք է աջակցություն ցուցաբերի, ապահովի լիարժեք և անվերապահ համագործակցություն: Գևորդի միտումն է, որ նման հայտարարված և/կամ չհայտարարված ստուգումները չստեղծեն ավելորդ ծանրաբեռնվածություն Մատակարարի համար, այնուամենայնիվ, Մատակարարը չի կարող օգտագործել իրականացված ստուգումների փաստը որպես Պայմանագրով ստանձնած պարտավորությունների իրականացման անհնարինություն՝ սույն Պայմաններով և Պայմանագրով սահմանված դրույթներին համապատասխան:</p>	<p>16.5. At any time with or without prior notification on behalf of the Buyer to the Supplier the Buyer and/or its representatives, advisers, employees or affiliates belonging to the Coca-Cola Hellenic Group of companies may execute an audit to review the Supplier’s compliance to this Terms, Agreement, Buyer’s policies and procedures. Such audit activities are to be fully supported by the Supplier and full and unconditional cooperation is to be provided. It is the Buyer’s intention that such announced and/or unannounced audits should not create unnecessary burdens on the Supplier, however the Supplier may not use the fact of the audits conducted as reasoning for not being able to fulfill the obligations undertaken under the Agreement according to this Terms and the Agreement in full.</p>
<p>16.6. Սույն Պայմաններում և Պայմանագրում կիրառվող բառերն ու արտահայտությունները մեկնաբանվում են</p>	<p>16.6. Words and expressions applied in this Terms and Agreement shall be interpreted in accordance</p>



<p>համաձայն սույն Պայմանների անբաժանելի մասը հանդիսացող կից փաստաթուղթ 1-ի:</p>	<p>with the attachment 1 considered as an integral part of this Terms.</p>
<p>16.7. Պայմանագիրը կարող է փոփոխվել կամ լրացվել միայն երկու Կողմերի փոխադարձ գրավոր համաձայնությամբ:</p>	<p>16.7. The amendments and additions to the Agreement shall be implemented by the Parties by a mutual written agreement.</p>
<p>16.8. Պայմանագրի բոլոր փոփոխությունները, հավելվածները, Պայմանագրի հիման վրա կնքված բոլոր համաձայնագրերը, փաստաթղթերը, Պատվերները կազմում են Պայմանագրի անբաժանելի մասը:</p>	<p>16.8. All changes, appendixes to the present Agreement, agreements, documents, Orders concluded based on the Agreement shall constitute an integral part thereof.</p>
<p>16.9. Պայմանագրով բոլոր ծանուցումները պետք է ուղարկվեն էլեկտրոնային նամակով, հեռապատճենով կամ գրավոր նամակով՝ Պայմանագրում նշված հասցեներով, եթե Պայմանագրի որևէ այլ կետով այլ բան սահմանված չէ:</p>	<p>16.9. All notices of the Agreement shall be by e-mail, fax or written letter, by the addresses defined in the Agreement, unless otherwise explicitly defined in the Agreement.</p>
<p>16.10. Կողմերը համաձայնվում են, որ Պայմանագրի հիման վրա մի Կողմի կողմից մյուսին ուղարկվող փաստաթղթերի սքանավորված տարբերակը համարվում է վավեր, մինչև Կողմերի կողմից համաձայնեցված ժամկետներում տվյալ փաստաթղթի թղթային տարբերակն ուղարկելը:</p>	<p>16.10. The Parties agree, that scanned copy of the documents sent from one Party to another based on the Agreement shall be considered as valid, till the hard copy thereof is sent within terms agreed upon by the Parties.</p>
<p>16.11. Կողմերը պարտավորվում են իրենց հասցեների, բանկային վավերապայմանների, ինչպես նաև վերակազմակերպման դեպքում միմյանց տեղյակ պահել համապատասխան փոփոխությունը տեղի ունենալու պահից երկու շաբաթվա ընթացքում: Սույն կետով սահմանված պարտավորությունը համապատասխան Կողմի կողմից չկատարելու դեպքում մյուս Կողմի բոլոր գործողությունները, որոնք կատարվել են նախկին հասցեների և/կամ տվյալների օգտագործմամբ, համարվում են պատշաճ կատարված:</p>	<p>16.11. In case of change of addresses and/or other data the Parties shall inform each other about address, bank requisites changes as well as their reorganization within two-week period from the date of appropriate change. In case of non-performance by the appropriate Party the obligation defined by this clause all actions of the other Party, with usage of previous addresses and/or data, shall be considered as properly performed.</p>
<p>16.12. Մատակարարը պարտավորվում է անհապաղ տեղեկացնել Գնորդին Մատակարարի Վերահսկողության Փոփոխության դեպքում: Պայմանագրի շրջանակներում Մատակարարի Վերահսկողության Փոփոխությունը վերաբերում է Մատակարարի վերաբերյալ ցանկացած փոփոխությանը, որը կապված է՝ ա) ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի ավելի քան 50 (հիսուն) տոկոսի սեփականության իրավունքի կամ վերահսկողության (ուղղակի կամ անուղղակի) հետ, կամ բ) ընդհանուր ժողովների ընթացքում օգտագործվող ձայների քանակի ավելի քան 50 (հիսուն) տոկոսի ղեկավարման իրավասության (ուղղակի կամ անուղղակի) հետ, կամ գ) տնօրենների խորհրդի անդամների մեծամասնությանը նշանակելու կամ հեռացնելու իրավունքի (ուղղակի կամ անուղղակի) հետ:</p>	<p>16.12. The Supplier shall promptly inform the Buyer in case of a Change of Control of the Supplier. For the purposes of the Agreement, "Change of Control" shall mean in reference to the Supplier, any change in: (a) the ownership or control (directly or indirectly) of more than 50 % ([fifty] percent) of the voting capital; or (b) the ability (directly or indirectly) to direct the casting of more than 50 % ([fifty] percent) of the votes exercisable at general meetings; or (c) the right (directly or indirectly) to appoint or remove the majority of the members of the board of directors</p>
<p>16.13. Պայմանագիրը կնքվում է հայերենով և անգլերենով, 2 (երկու) բնօրինակից, որոնցից յուրաքանչյուրն ունի հավասար իրավաբանական ուժ: Պայմանագրի հայերեն և անգլերեն տեքստերի միջև անհամապատասխանության դեպքում գերակայությունը տրվում է հայերեն տարբերակին: Կողմերից յուրաքանչյուրին տրվում է Պայմանագրի մեկ բնօրինակ:</p>	<p>16.13. The Agreement is made in Armenian and English languages, in 2 (two) original copies of equal force. In case of inconsistencies between the Armenian and English versions, the Armenian version shall prevail. Each Party to the Agreement is given an original copy.</p>
<p>16.14. Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի կողմից երկկողմանի ստորագրման և հաստատման պահից և գործում է մինչև Պայմանագրով սահմանված ժամկետը ներառյալ: Պայմանագրի գործողության ժամկետի ավարտից հետո այդ Պայմանագրի հիման վրա նոր Պատվերներ չեն կարող փոխհամաձայնեցվել և</p>	<p>16.14. The Agreement shall enter into force from the moment of bilateral signature and approval by the Parties and shall act till the date specified in the Agreement inclusive. After the expiration of validity period of the Agreement there cannot be mutually agreed and concluded new Orders and there cannot</p>



կնքվել:	be mutually agreed and given new Orders.
<p>16.15. Գնորդն իրավունք ունի ցանկացած ժամանակ միակողմանի հրաժարվել Պայմանագրից՝ այդ մասին 15 (տասնհինգ) օր առաջ տեղեկացնելով Մատակարարին՝ առանց հետագա ֆինանսական և այլ պարտավորության, բացառությամբ չկատարված պարտավորությունների, որոնց մասով Պայմանագիրը դադարում է դրանց ամբողջական կատարման պահից: Սույն կետով նախատեսված հիմքով Պայմանագրի դադարեցման դեպքում Պայմանագիրը համարվում է դադարեցված Գնորդի նման ծանուցումը Մատակարարի կողմից ստանալու պահից՝ առանց հավելյալ փաստաթղթային ձևակերպման անհրաժեշտության:</p>	<p>16.15. The Buyer has the right to unilaterally terminate the Agreement at any time with 15 (fifteen) days prior written notice to the Supplier without any further financial or other obligations, except for non-executed obligations, for which this Agreement shall terminate upon full execution. In case of termination of the Agreement according to the basis defined by this clause the Agreement shall be deemed terminated from the moment of receipt of Buyer's such notification by the Supplier without necessity of additional documentation.</p>
<p>16.16. Գնորդի կողմից Պայմանագրի որևէ դրույթ խախտելու դեպքում, Մատակարարը կարող է միակողմանի հրաժարվել Պայմանագրից կամ համապատասխան Պատվերից՝ այդ մասին գրավոր ծանուցելով Գնորդին և նրան տրամադրելով 15 (տասնհինգ) օր ժամանակ թերությունները վերացնելու համար: Եթե Գնորդը չի վերացնում խախտումը սահմանված ժամկետում, ապա Պայմանագիրը կամ Պատվերը լուծված է համարվում թերությունները վերացնելու ժամկետը լրանալու պահից, առանց որևէ այլ իրավական ձևակերպումներ կատարելու կամ դատարանի կամ արբիտրաժի անհրաժեշտության:</p>	<p>16.16. In the event of breach of any of the conditions of the Agreement by the Buyer, the Supplier may unilaterally terminate the Agreement or appropriate Order subject to giving the Buyer a written notice and allowing it 15 (fifteen) days to cure the default. The Agreement or the Order shall terminate on expiration of the cure period if the Buyer has failed to cure the breach, with no other formalities or judicial or arbitral court intervention being required.</p>
<p>16.17. Մատակարարի կողմից Պայմանագրի որևէ դրույթ խախտելու դեպքում, Գնորդը կարող է միակողմանի հրաժարվել Պայմանագրից կամ համապատասխան Պատվերից՝ այդ մասին ծանուցելով Մատակարարին և նրան տրամադրելով 15 (տասնհինգ) օր ժամանակ թերությունները վերացնելու համար: Եթե Մատակարարը չի վերացնում խախտումը սահմանված ժամկետում, ապա Պայմանագիրը կամ Պատվերը համարվում է լուծված թերությունները վերացնելու ժամկետը լրանալու պահից, առանց որևէ այլ իրավական ձևակերպումներ կատարելու կամ դատարանի կամ արբիտրաժի անհրաժեշտության:</p>	<p>16.17. In the event of breach of any of the conditions of the Agreement by the Supplier, the Buyer may unilaterally terminate the Agreement or the respective Order subject to giving the Supplier a notice and allowing it 15 (fifteen) days to cure the default. The Agreement or the Order shall terminate on expiration of the cure period if the Supplier has failed to cure the breach, with no other formalities or judicial or arbitral court intervention being required.</p>
